ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-2-1-Ա

ք. Երևան 16.03.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի մարտի 16-ի նիստում քննարկեց 2016 թվականի փետրվարի 3-ին Արման Աղաջանյանի կողմից ներկայացված «dubaitravel.am» (հայտ No20141321) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 107-րդ կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 39-րդ եւ 43-րդ դասերի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ԴՈՒԲԱՅՏՈՒՐ DUBAITOUR ДУБАЙТУР» («Էրեբունի-էյր» ՍՊԸ, Երեւան, Գ. Նժդեհի 17, տաղավար 39, AM, N 21230) բառային ապրանքային նշանին: Կարգի 115-րդ կետի 1-ին ենթակետի, 119-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի համաձայն

համեմատվող բառային ապրանքային նշաններն ունեն իմաստային նմանություն, որը որոշվում է նշանների մեջ դրված նույն հասկացությամբ, գաղափարով, ինչպես նաեւ նշանների տարրերից որեւէ համընկնող տարրով, որն առանձին իմաստ ունի եւ որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում «DUBAI» բառը, որը ներառված է համեմատվող բառային ապրանքային նշանների մեջ: Ինչ վերաբերվում է «TOUR», «TRAVEL» բառերին եւ «.am» տառակապակցությանը, ապա նրանք չունեն տարբերակիչ հատկություն, քանի որ առաջին երկուսը կրում են գրեթե նույն իմաստը եւ մատնանշում ծառայության այն տեսակը, որի համար հայտարկված է ապրանքային նշանի գրանցումը, իսկ «.am»-ը նշում է Հայաստանի ազգային դոմենի առաջին մակարդակը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ ներկայացված և հակադրված նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են և դրանց մեջ մտնող բառերը առանձին-առանձին ունեն գրեթե նույն իմաստը ինչը հանրությանը կարող է մոլորության մեջ գցել ծառայությունները մատուցողի հարցում: Հետևաբար ներկայացված ապրանքային նշանը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն չի կարող գրանցվել:

Բողոքարկողը մնաց այն կարծիքին, որ ներկայացված նշանը կարող է գրանցվել և համագոյատևել հակադրված նշանի հետ:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Արման Աղաջանյանի կողմից ներկայացված՝ «dubaitravel.am» (հայտ No20141321) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ